ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 16.03.2018թ.
ժ. 16[30]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ ՀՀԱ, ՋՏ և ԱՏ միջոցներով ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Մ. Ավետիսյան
ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչության ՋՏԾ հաշվառման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կ. Ավետիսյան
ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:
Գնումների համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Վ. Սահակյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Վ. Սահակյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Վ. Սահակյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Մեդիսար» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ: Գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել միջև սահմանված ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Մեդիսար» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, որում խնդրում է որակավորման նիստը տեղափոխել 21.03.18թ,:

19.03.18թ. Հանձնաշողովը որոշեց մերժել «Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

1.2 «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում, քանի որ 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և բավարար գնահատված «Յունիքիմ» ՍՊԸ-ի ներկայացրաց գինը գերազանցում է պատվիրատուի՝ տվյալ չափաբաժնի համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, մասնակիցը ճանուցվեց

23.03.2018թ. ժամը 10[30]-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կայանալիք բանակցությունների վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2018թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Մեդիսար» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Վ. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել վերը նշված բանակցությունների օրը ժամը 10:30-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող	Մ. Ավետիսյան
Գնահատող	Կ. Ավետիսյան
Գնահատող	Հ. Բարսեղյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումների համակարգող՝	Վ. Սահակյան

19.03.2018թ.